



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

ՈՐՈՇՈՒՄ

-- մայիսի 2018 թվականի №---Ս
ք.Երևան

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ
ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2017 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 19-Ի №326Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ
ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Հաշվի առնելով, որ՝

ա) 2018 թվականի ապրիլի 20-ին «ՍՈԼ ԷՆԵՐՋԻ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունը (այսուհետ՝ Ընկերություն) դիմել է Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողով (այսուհետ՝ Հանձնաժողով)՝ ինդրելով մեկ տարի ժամկետով երկարաձգել Հանձնաժողովի 2017 թվականի հուլիսի 19-ի «ՍՈԼ ԷՆԵՐՋԻ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը «Արտանիշ-1» արևային էլեկտրակայանում էլեկտրական էներգիայի (հզորության) արտադրության լիցենզիա տրամադրելու մասին» №326Ա որոշմամբ Ընկերությանը տրամադրված «Արտանիշ-1» արևային էլեկտրակայանում էլեկտրական էներգիայի (հզորության) արտադրության ԼԷ №0611 լիցենզիայով (այսուհետ՝ ԼԷ №0611 լիցենզիա) ամրագրված կառուցման ժամանակահատվածը,

բ) «Արտանիշ-1» արևային էլեկտրակայանի կառուցման և շահագործման գործարար ծրագրի համաձայն՝ մեկ տարի կառուցման ժամանակահատվածից 4 ամիսը նախատեսված էր նախագծային-նախահաշվային աշխատանքների և նախագծի փորձաքննությունների համար, իսկ հետագա 8 ամսում Ընկերությունը նախատեսում էր ավարտին հասցնել կայանի կառուցման աշխատանքները,

գ) Ընկերությունը 2018 թվականի մարտի 19-ին Հանձնաժողով է ներկայացրել «Արտանիշ-1» արևային էլեկտրակայանի կառուցման՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրության պահանջներին համապատասխան փորձաքննություն անցած նախագիծը՝ դրական փորձագիտական եզրակացություններով, որի համաձայն փոփոխվել են էլեկտրակայանի տեխնիկատնտեսական ցուցանիշները, մասնավորապես՝ ԼԷ №0611

լիցենզիայի պայմաններով ամրագրված արևային վահանակների քանակը և հզորությունը, որի հետևանքով՝ նաև տեղակայվող հզորությունը, և հիմք ընդունելով «Էներգետիկայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 30-րդ հոդվածի 1-ին կետը, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 1-ին հոդվածի 2-րդ մասը, 33-րդ և 34-րդ հոդվածները, Հանձնաժողովի 2013 թվականի նոյեմբերի 1-ի N°374Ն որոշմամբ հաստատված կարգը, այդ թվում կարգի N°3 հավելվածը՝ երաշխիքների ներկայացման և պետական բյուջե փոխանցման կարգը՝ Հանձնաժողովը **որոշում է**.

1. Ութ ամիս ժամկետով երկարաձգել ԼԷ N°0611 լիցենզիայով ամրագրված «Արտանիշ-1» արևային էլեկտրակայանի կառուցման ժամանակահատվածը՝ Հանձնաժողովի 2017 թվականի հուլիսի 19-ի «ՍՈԼ ԷՆԵՐՋԻ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը «Արտանիշ-1» արևային էլեկտրակայանում էլեկտրական էներգիայի (հզորության) արտադրության լիցենզիա տրամադրելու մասին» N°326Ա որոշման մեջ «մինչև 2018 թվականի հուլիսի 19-ը» բառերը փոխարինելով «մինչև 2019 թվականի մարտի 19-ը» բառերով:
2. ԼԷ N°0611 լիցենզիայի պայմանների՝
 - 1) 6-րդ կետում «999» թիվը փոխարինել «994.5» թվով,
 - 2) 7-րդ կետում «3700» թիվը փոխարինել «3060» թվով, իսկ «0.270» թիվը՝ «0.325» թվով:
3. Ընկերությանը՝ ԼԷ N°0611 լիցենզիայի պայմանները չկատարելու պատճառով «Արտանիշ-1» արևային էլեկտրակայանի կառուցման ժամանակահատվածը երկարաձգելու համար, սույն որոշումն ուժի մեջ մտնելու պահից՝
 - 1) մեկամսյա ժամկետում «ՀԱՅԲԻՋՆԵՍԲԱՆԿ» փակ բաժնետիրական ընկերության 2017 թվականի հունիսի 26-ի N°3710-02 գրությամբ ներկայացված երաշխիքի համաձայն երաշխավորված երկու միլիոն հինգ հարյուր հազար դրամ գումարից մեկ միլիոն երկու հարյուր քառասուններեք հազար հարյուր քսանհինգ դրամը 900005028130 հաշվեհամարով փոխանցել Հայաստանի Հանրապետության պետական բյուջե.
 - 2) քառասունհինգօրյա ժամկետում Հանձնաժողով ներկայացնել երկու միլիոն չորս հարյուր ութսունվեց հազար երկու հարյուր հիսուն դրամ գումարի երաշխիք՝ մինչև 2019 թվականի մայիսի 3-ը գործողության ժամկետով:

4. Ընկերությանը՝ ընդունել ի գիտություն, որ իրավասու է սույն որոշումն ուժի մեջ մտնելու պահից երկամսյա ժամկետում այն բողոքարկել Հանձնաժողով կամ Հայաստանի Հանրապետության վարչական դատարան:
5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում 2018 թվականի հուլիսի 19-ից:

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ
ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ
ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ՝**

Ռ. ՆԱԶԱՐՅԱՆ

ք. Երևան
-- մայիսի 2018թ.